«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 1754 27 01 2024թ.

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հաստատել մասնաճյուղի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտարկել որպես աշխատանքային պարտականությունների չկատարում և «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոններով» սահմանված կարգով կիրառել կարգապահական տույժ:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել փոխտնօրեն Մ. Օթարյանի և Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **ուսումնական պարապմունքներն սկսել՝**

ա) առկա ուսուցման համար՝ փետրվարի 7-ից և ավարտել հունիսի 4-ին,

բ) հեռակա ուսուցման համար՝ մարտի 12-ից և ավարտել ապրիլի 13-ին:

2. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **ստուգարքների ընդունումը կազմակերպել՝**

ա) առկա ուսուցման բակալավրիատի համար՝ մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը,

բ) հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի համար՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 1-ը:

3. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի **քննաշրջանն անցկացնել՝**

ա) առկա ուսուցման բակալավրիատի համար՝ հունիսի 11 - 29-ը,

բ) հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի համար՝ հունիսի 4 -29-ը:

4. 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման **պարտքերի մարում սահմանել՝**

ա) առաջին լուծարքային շրջան՝ հուլիսի 4 - 10-ը,

բ) երկրորդ լուծարքային շրջան՝ օգոստոսի 23 - 30-ը:

5. Բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտների 2024թ. ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել մայիսի 2 - 30-ը ժամանակահատվածում:

6. Բակալավրիատի հեռակա ուսուցման շրջանավարտների 2024թ. ամփոփիչ ատեստավորումը կազմակերպել հունիսի 4 - 22-ը ժամանակահատվածում:

7. Ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողներին արգելել մասնակցել ստուգարքներին ու քննություններին (այդ թվում՝ ընթացիկ): Ամսական վճարման պարագայում առաջին ընթացիկ քննություններին թույլատրել մասնակցելու երկու ամսվա ուսման վարձը վճարելուց հետո:

8. Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2023-2024 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները և ավարտական աշխատանքների պաշտպանությանը թույլատրված ուսանողների վերաբերյալ զեկուցագրերը:

9. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությանը նախորդող մեկ շաբաթվա ընթացքում ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել գրախոսության համար նախատեսված ժամաքանակների զեկուցագրերը:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նիստերին հաջորդող երկօրյա ժամկետում ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել շրջանավարտների ավարտման վերաբերյալ զեկուցագրերը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել վերջին քննությունից հետո հնգօրյա ժամկետում (ըստ 4-րդ ձևի):

11. Պրակտիկան սկսվելուց 10 օր առաջ մասնաճյուղի ՊԿՇՀ բաժին ներկայացնել պրակտիկա անցնող ուսանողների վերաբերյալ զեկուցագրերն ու ըստ նախապես համաձայնեցված պրակտիկայի անցկացման վայրերի տեղաբաշխած ուսանողների ցուցակները: Պրակտիկաների ավարտից հետո, 15-օրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվությունները:

12. Ժամավճարային հիմունքներով կատարված աշխատանքների հաշվարկի տեղեկագրերը (աշխատանքների հանձնման ակտ) ՈՒՄՎ ներկայացնել մինչև հաջորդ ամսվա 10-ը:

13. Աշխատողի՝ որևէ պատճառով բացակայելու դեպքում փոխարինող այլ աշխատողի ներգրավելու մասին զեկուցագիրը մասնաճյուղի տնօրենին ներկայացնել բացակայող աշխատողի փոխարինման անհրաժեշտություն առաջանալու պահից առավելագույնը եռօրյա ժամկետում:

14. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողական իրավունքները վերականգնող և տեղափոխվող ուսանողների վերակնքված պայմանագրերը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հրամանագրումից հետո երկօրյա ժամկետում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՈՒՆՎԱՐ

- Հունվարի 23-ից փետրվարի 13-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **դասընթացի կրկնման** դիմումները՝ վճարման անդորրագրերով, որից հետո ներկայացնել դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով համապատասխան զեկուցագրերը:
- Հունվարի 24 - 31-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև 2024թ. հունվարի 31-ը ՈՒԳԿՎ ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ առկա ուսուցման ուսանողների շրջանում 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողների առցանց հարցում կազմակերպելու համար:

ՓԵՏՐՎԱՐ

- Մինչև փետրվարի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներն ըստ սահմանված ձևի (հաշվետվություն ձև 34):

- Մինչև փետրվարի 2-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:
- Մինչև փետրվարի 2-ը ՈՒՄՎ ներկայացնել 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների վերաբերյալ զեկուցագրերը:
- Փետրվարի 7-13-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:
- Մինչև փետրվարի 7-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը (ըստ սահմանված ձևի՝ ձև 10) և շրջանավարտների ավարտման մասին զեկուցագրերը:
- Մինչև փետրվարի 9-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել մագիստրատուրայի հեռակա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը (ձև 4):
- Մինչև փետրվարի 13-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերի փաթեթները՝ համաձայն համապատասխան կարգի դրույթների:
- Մինչև փետրվարի 14-ը ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:
- Մինչև փետրվարի 16-ը e-learning.ysu.am ուսուցման կառավարման համակարգի (ՈՒԿՀ) համապատասխան դասընթացի էջում տեղադրել 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող դասընթացների պլանները:
- Մինչև փետրվարի 27-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև փետրվարի 28-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել գերազանցության դիպլոմի հավակնող բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման 2024թ. շրջանավարտների թիվը:
- Մինչև փետրվարի 28-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներն ըստ սահմանված ձևի (հաշվետվություն ձև 34):

<u>ՄԱՐՏ</u>

- Մինչև մարտի 1-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ հանձնաժողովների կազմերն ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:
- Մինչև մարտի 1-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Մինչև մարտի 1-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ ամրագրել բակալավրիատի առկա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Մինչև մարտի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն՝ ըստ սահմանված ձևի:

- Մինչև մարտի 15-ը ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ սահմանված ձևով SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել բակալավրիատի առկա ուսուցման 2024-2028թթ. և հեռակա ուսուցման 2024-2029թթ. մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2024թ. սկիզբ առնող ուսումնական պլանները:
- Մինչև մարտի 22-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի 2024թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածուների տվյալները:

ԱՊՐԻԼ

- Մինչև ապրիլի 2-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների փաստացի թիվը:
- Մինչև ապրիլի 2-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքի արդյունքներն՝ ըստ սահմանված ձևի:
- Մինչև ապրիլի 2-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համակարգել և ամփոփել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների կողմից էլեկտրոնային կառավարման համակարգում (ռեգիստրար) 2024-2025 ուսումնական տարվա կամընտրական դասընթացների ընտրության գործընթացը:
- Մինչև ապրիլի 3-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել բակալավրիատի և մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ քննությունների ժամանակացույցները:
- Ապրիլի 4-ից մինչև 10-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև ապրիլի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել 2024թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև ապրիլի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի առկա ուսուցման 2024թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:
- Մինչև ապրիլի 6-ը մասնաճյուղի փոխտնօրենին ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով տետրերի ծավալը (էջերի թիվը): *Ներկայացված զեկուցագրերը հիմք են հանդիսանում համապատասխան գրությամբ ԵՊՀ-ին դիմելու և ԵՊՀ պահեստից ստանալու համար:*
- Մինչև ապրիլի 6-ը մասնաճյուղի փոխտնօրենին ներկայացնել 2024-2025 ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասամատյանների քանակը՝ նշելով տեսակները (փոքր, միջին, մեծ): *Ներկայացված զեկուցագրերը հիմք են հանդիսանում համապատասխան գրությամբ ԵՊՀ-ին դիմելու և ԵՊՀ պահեստից ստանալու համար:*
- Ապրիլի 17 - 23-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:

ՄԱՅԻՍ

- Մինչև մայիսի 3-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել ուսումնական ստորաբաժանումների գիտական խորհուրդներում հաստատված մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաները և հրամանագրված ղեկավարների տվյալները:
- Մինչև մայիսի 7-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:

- Մինչև մայիսի 14-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի հեռակա ուսուցման 2024թ. ամփոփիչ ատեստավորման գործընթացի ժամանակացույցը:
- Մինչև մայիսի 14-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցները:
- Մինչև մայիսի 15-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ, սահմանված ձևով SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային ուսումնական պլանները:
- Մինչև մայիսի 24-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել կարգով նախատեսված տվյալներ բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների շրջանում 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսանողական առցանց հարցում կազմակերպելու համար:
- Մինչև մայիսի 30-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգ ներբեռնել առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները:

<u>ՀՈՒՆԻՍ</u>

- Մինչև հունիսի 4-ը ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում մուտքագրել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ամբիոնային և դասախոսների անհատական բեռնվածությունները:
- Մինչև հունիսի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն առկա ուսուցման 2024թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):
- Մինչև հունիսի 7-ը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պաշտոնական կայքեջում (www.ijevan.ysu.am) վերախմբագրել 2024-2025 ուսումնական տարում մագիստրատուրայի հեռակա ուսուցման ընդունելություն հայտարարած կրթական ծրագրերի **ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ** բաժինը:
- Մինչև հունիսի 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել ֆակուլտետների գիտական խորհուրդներում քննարկված կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ քաղվածքները («Ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի 114-րդ կետի պահանջներին համապատասխան):
- Հունիսի 20 - 30-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի** վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև հունիսի 26-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման վերաբերյալ (կարգի դրույթներին համապատասխան):
- Մինչև հունիսի 30-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգ ներբեռնել հեռակա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերը և դասընթացների նկարագրիչները:

<u>ՀՈՒԼԻՍ</u>

- Մինչև հուլիսի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների վերաբերյալ քանակական տվյալներ՝ ըստ սահմանված ձևի (հաշվետվություն ձև 34):
- Մինչև հուլիսի 3-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ քննաշրջանի լուծարքային քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:
- Մինչև հուլիսի 3-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքների քննական հանձնաժողովների կազմերի վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև հուլիսի 5-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել հաշվետվություն բակալավրիատի հեռակա ուսուցման 2024թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ (ձև 10):

- Հուլիսի 6 - 13-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցների և քննական հանձնաժողովների կազմերի զեկուցագրերը և ՈՒԳԿՎ բաժնի հետ համատեղ ամրագրել SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում:
- Մինչև հուլիսի 12-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման ուսանողների կուրսից կուրս փոխադրման վերաբերյալ զեկուցագրերը:
- Մինչև հուլիսի 16-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել առկա ուսուցման բակալավրիատի 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները (առաջին կուրսերինը նախնական տարբերակով):

ՕԳՈՍՏՈՍ

- Օգոստոսի 22-ից սեպտեմբերի 9-ը ԱԿԻԱ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների **դասընթացի կրկնման** դիմումները՝ վճարման անդորրագրերով, որից հետո ներկայացնել դասընթացների կազմակերպման վերաբերյալ առաջարկներով համապատասխան զեկուցագրերը:
- Մինչև օգոստոսի 31-ը SuperVision էլեկտրոնային կառավարման համակարգում ամրագրել հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասատախտակները (բացառությամբ առաջին կուրսերի):

ՍԵՊՏԵՄԲԵՐ

- Մինչև սեպտեմբերի 4-ը, սահմանված ձևով, ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2023-2024 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի երկրորդ լուծարքների վերաբերյալ արդյունքները:
- Մինչև սեպտեմբերի 4-ը ՈՒԳԿՎ բաժին ներկայացնել բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման ուսանողների մինչև 12 կրեդիտ ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ սահմանված ձևով:
- Մինչև սեպտեմբերի 6-ը բակալավրի կրթական ծրագրերի առկա ուսուցման առաջին կուրսերի ուսանողների համար էլեկտրոնային կառավարման համակարգում (ռեգիստրար) կազմակերպել «Օտար լեզու» և «Ֆիզիկական դաստիարակություն» դասընթացների ընտրությունը:
- Մինչև սեպտեմբերի 10-ը ուսումնական ստորաբաժանումների մանդատային հանձնաժողովներում հաստատել փոխատեղման (ռոտացիա) հավակնորդների ցուցակները և արդյունքները ներկայացնել մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի նախագահին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**